ԿԱՆՈՆՆԵՐ

ԲՆԱԿՎԱՐՁԿՈՊՆԵՐԻ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ

ՀՐԱՏ ՀՍԽՀ ՀՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՇՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ 1934

Գեղարվեստական խմբագիր Սրբուհի Հ. Մայիլյան

Պատվեր 2507 Գլավլիտ 8990 Տիրաժ 2000

614.84

20 JAN 2018

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կուսակցությունը և ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգը, աշխատավոր գյուղացիության լայն մասսաների հետ միասին, իրագործելով սոցիալիզմի կառուցման մեծ աշխատանքների ծրագիրը մեր յերկրում, նոր ինդուստրիալ հսկաներ, նոր ֆաբրիկաներ և գործարաններ շահագործման մեջ առնելու կողքին, խնդիր է դնում իր առաջ ամենայն կերպ բարելավել աշխատավորների բնակարանային-կենցաղային պայմանները նրա բնակարաններ կառուցելու և հները բարեկարգելու միջոցով: Ընդվորում, քաղաքի բնակֆոնդի այն հրդեհները, վորոնք առաջ են գալիս դեպի հակահրդեհային ձեռնարկումները մեր ունեցած անփութության և անուշադրության պատճառով, հարյուր հազարավոր ռուբլիներ են խլում մեզանից ամեն տարի, ռուբլիներ, վորոնք յեթե հրդեհներ առաջ չգային, կարող եյին բնակվարձկոոպներում մի այլ, շատ ավելի ոգտավետ նպատակի համար ծախսվել վոչ թե այրված շենքերը վերականգնելու կամ նորերը կառուցելու, այլ մանկատների, մանկամսուրների, լվացքատների, ակումբների, հասարակական ճաշարանների և այլ շենքերում բարեկարգություն ստեղծելու համար:

Զնայած բազմաթիվ հրդեհներին ու դրանց պատճառած մարդկային զոհերին, աշխատավորները մոռանում են անցյալի դառը դասերը և շարունակում են անուշադիր մնալ դեպի հրդեհային ապահովության ամենաառաջնային կանոնները:

Այն պատճառները, վորոնցից հրդեհներ են առաջ գալիս բնակվարձկոոպներում, յեթե վոչ բոլոր դեպքերում, ապա մեծ մասամբ կարելի յե վերացնել:

1. ՀՐԴԵՀՆԵՐ, ՎՈՐՈՆՔ ԾԱԳՈՒՄ ԵՆ ԿՐԱԿԻ ՀԵՏ ԱՆԶԳՈՒՇԱԲԱՐ ՎԵՐԱԲԵՐՎԵԼՈՒՑ

Մի վառեք վառարանները կերասինով, բենզինով և այլ դյուրավառ հեղուկներով. դրանով դուք հնարավորություն եք ստեղծում հրդեհներ կամ պայթումներ առաջ գալու համար, վորոնցից դուք ինքներդ կարող եք այրված քներ ստանալ. մի ծխեք այնպիսի տեղերում, վորոնք վտանգավոր են հրդեղ առաջ գալու տեսակետից, մի գցեք գլանակի չմարված մնացորդները և լուցկիներ. սամովարներ, հարթուկներ և այլն մի դրեք հաշտում, վարագույրների տակ և փայտի սանդուխքների վրա, անխնամ մի թողեք վառած վառարաններն, վառած պրիմուսները, լամպաներն ու կերասինկաներն, ինչպես և մի հանձնարարեք յերեխաներին դրանց վառելը և հետևելը. մի դրեք սեղանի ծայրին կամ պատուհանի վրա արտասանդուխքի կողքին վառած լամպեր և այլն, քանի վոր դրանց կարող են անզգուշարար վայր գցել ընտանի կենդանիները՝ կատուներն ու շները. մի պահեք կրակի մոտ բենզին, կերասին և այլ դյուրավառ հեղուկներ և այդ դեպքում բնակելի տարածության տասնյակ հազարավոր քառակուսի մետրեր անվնաս կմնան:

2. ՀՐԴԵՀՆԵՐ, ՎՈՐՈՆՔ ԾԱԳՈՒՄ ԵՆ ՋԵՌԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՎՈՉ ՄԱՔՈՒՐ ԼԻՆԵԼՈՒՑ

Ժամանակին սվաղեցեք վառարանների և ծխանցքների ճեղքված քները, սահմանված ժամկետներում մաքրեցեք ծխանցքների մուրը, պահպանեցեք վառարաններն ու ծխանցքները շենքի փայտի մասերից բաժանելու վերաբերյալ կանոնները: Փայտի հատակների վրա վառարանների առաջ ունեցեք յերկաթաթերթեր և հետևեցեք, վոր վառարանների դռները լինեն սարքին: Դրանով դուք միմիայն մի տարվա ընթացքում խնայած կլինեք հարյուր հազարավոր ռուբլի ժողովրդական դրամ:

ՍԱՀՄԱՆ ՀԱՍՍԱՐ
11-249159p

ՀՐԴԵՀՆԵՐ՝ ՎՈՐՈՆՔ ԾԱԳՈՒՄ ԵՆ ԵԼԵՔՏՐՀԱՂՈՐԴՄԱՆ ՎՈՉ ՍԱՐՔԻՆ ԼԻՆԵԼՈՒՑ

Հետևեցեք, վոր կարճատև փակում (краткое замыкание) տեղի չունենա, վորն առաջ է գալիս հաղորդալարերի վնասումից, կամ դրանց ընդհանրապես հնացած մեկուսացումից, խոնավությունից, անջատիչների չտեպցելների և այլ արմատուրայի վոչ սարքին լինելուց, հաղորդալարերի ավելի մեծ քանակությամբ լամպերով ծանրաբեռնված լինելուց քան ի վիճակի յեն սպասարկելու այդ հաղորդալարերը և մի բան, վոր եյա կանն է՝ անհամապատասխան անջատիչների առկայությամբ:

Ուստի, դուք ինքներդ մի սարքեք և մի վերակառուցեք ելեքտրոլուսավորությունն, յեթե լավ ծանոթ չեք այդ գործին: Ելեքտրոլուսավորությունը պետք է միանգամայն համապատասխանի այս առթիվ գոյություն ունեցող կանոններին:

4. ՀՐԴԵՀՆԵՐ, ՎՈՐՈՆՔ ԾԱԳՈՒՄ ԵՆ ԴՅՈՒՐԱՎԱՌ ՀԵՂՈՒԿՆԵՐԸ ԼԱՄՊԵՐՈՒՄ, ՊՐԻՄՈՒՍՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԿԵՐԱՍԻՆԿԱՆԵՐՈՒՄ ԲՈՆԿՎԵԼՈՒՑ.

Ցուրաքանչյուր աշխատավոր պետք է գիտենա, վոր խիստ տաքացած կամ վառած լամպերի, պրիմուսների և կերասինկաների մեջ կերասին լցնելու, տաք պլիտայի վրա դնելու, բենզին կամ բենզինի և կերասինի խառնուրդ դործածելու, այդ հեղուկները տաքացնելու և լցնելու, ինչպես և վոչ սարքին լամպաներից, պրիմուսներից և կերասինկաներից ոդավելու դեպքում, նա անմիջական հնարավորություն է ստեղծում հրդեհի կամ պայթումի համար, շատ հաճախ մարդկային զոհերով: Վտանգի մի յենթարկեք ձեզ և բացատրեցեք այդ ուրիշներին:

5. ՀՐԴԵՀՆԵՐ ՎՈՐՈՆՔ ԾԱԳՈՒՄ ԵՆ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՁԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Մի՛շտ խստորեն արգելեք յերեխաներին կրակի հետ խաղալը՝ կրակը խաղալիք չի, թողնելով յերեխաներին

մենակ, հանդցրեք պրիմուսները, կերասինկաները և այլն, հեռացրեք լուցկիները, դրանով դուք կ՝կրճատեք հրդեհների թիվը քաղաքում, միմիայն մեկ տարվա ընթացքում տասնյակ դեպքերով:

Ընդվզում, պետք է մանրամասն կանգ առնել հրդեհի տարածման պատճառների վրա: Ամենավին չի պետք է կարծել, որ յեթե հրդեհն արդեն կարողացել է բավականին տարածվել և հանդցվել է այն ժամանակ, յերբ վողջ բնակարանը կամ տան մի վորոշ մասը այրվել է, ապա դրա պատճառը հրդեհային պահպանության վոչ բավարար չափով կազմակերպված լինելու հանգամանքն է: Գլխավոր մեղքը նաև հրդեհի պատճառած վնասների չափի վերաբերմամբ նույնպես բնակչությունն է: Հաճախ հրշեջներին կանչում են միմիայն այն ժամանակ, յերբ կրակն արդեն մեծ ծավալ է առացել և պայքարելն արդեն դժվար է: Քաղաքացիներն այն կարծիքն ունեն, որ հրշեջներին կանչելու համար պետք է վճարել, շատերը չգիտեն, որ հրշեջ խումբն որվա ուղած ժամանակ, ամեն մի բոպե, ոգնում է ձրիաբար քանի որ հենց դրա համար ել նա գոյություն ունի: Հետեվապես յուրաքանչյուր, թեկուզ և աննշան հրդեհ առաջ գալու դեպքում մի քաշվեք, կանչեցեք հրշեջներին: Հիշեցեք, որ յեթե դուք նույնիսկ կրակը կարողանաք հանդցնել ձեր սեփական ուժերով մինչել հրշեջների գալը, ապա այդ նշանակություն չունի, դուք պատասխանատու չեք: Ավելի վատն այն է, որ աննշան հրդեհ ծագելու դեպքում քաղաքացիներն աշխատում են իրենք հանդցնել և միմիայն այն ժամանակ, յերբ հրդեհն արդեն մեծ չափեր է ընդունում, հիշում են հրշեջ խմբի գոյության մասին և այս դեպքում շատ հաճախ դժվարություններ են առաջ գալիս և թանդարժեք կորուստ, քանի որ մոտակա հեռախոսի մոտ փակցված չի լինում այն պլակատը, որ ցույց է տալիս, թե որ համարով պետք է զանգահարել հրդեհ առաջ գալու դեպքում: **Կրակի արագ տարածվելուն նպաստում է և այն, որ**

անցքերը, սանդուխքների հարթակները և այլն փակած են լինում զանազան իրերով, որի շնորհիվ այրվում է վոչ միայն տնային դուլքն, այլ և մարդիկ: Ավելի հաճախ լինում են այսպես՝ գալիս են հրշեջներ և աշխատանքը արագ ծավալելու փոխարեն մի շարք խոչընդոտների են հանդիպում, որովհետև պարզվում է, որ հրը չեջ ջրմուղի ջրհորը ծածկված է ճյունով և սառույցով, շենքի մուտքն ազատ չի, այրվող շենքի դռների մի մասը փակված է և այլն:

Ահա այն գլխավոր պատճառները, որոնցից ծագում և խոշոր չափեր են ընդունում հրդեհները բնակվարձկոոպներում: Այստեղից յերևում է, որ յեթե մենք ինքներս ավելի զգույշ և ուշադիր վարվենք կրակի հետ, յեթե մենք հարկ յեղած ուշադրություն դարձնենք նշված բոլոր կանոնների ճշտիվ կիրառմանը և ուրիշներին ել դրդենք այդ անելու, ապա հրդեհները գրեթե չեն լինի: Պետք է միայն ուշադիր, շրջահայաց վերաբերմունք ունենանք դեպի կրակը և հույսներս չ՝դնենք «բախտի» վրա: Պետք է վճռականորեն կազմակերպված պայքար մղել նրանց դեմ, ովքեր արհամարհական վերաբերմունք են ցույց տալիս դեպի հասարակական դուլքը և լավ իմանալ, որ հրդեհային պահպանությունը բոլոր աշխատավորների գործն է: Միմիայն կուլտուր-կրթական ճանապարհով, հասարակական կազմակերպությունների, տեղական թերթերի, բնակվարձկոոպների, ակումբների և կարմիր անկյունների ոգնությամբ, լայնորեն ոգտագործելով պրոպագանդի համար հրշեջ-տեխնիկական աշխատողներին, կարելի յե բացատրել բնակ. ֆոնդը հրդեհներից պաշտպանելու գործի առանձնահատուկ կարևորությունը:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

1. Այս կանոնները տարածվում են ՀՍԽՀ բնակվարձկոոպների բոլոր շենքերի վրա:

2. Հակահրդեհային միջոցառումներ ձեռք չառնելու պատասխանատվությունը դրվում է բնակվարձկոոպների վարչությունների նախագահների վրա, իսկ

առանձին բնակարանների նկատմամբ՝ լիազորների կամ պատասխանատու վարձակալների վրա։

3. Այս կանոնների կիրառման ընդհանուր հսկողությունն ու կոնտրոլը դրվում է յենթաշրջանակմիությունների նախագահների վրա։

4. Բնակվարձկոոպի վարչության նախագահի պարտականությունն է՝

ա) ժամանակին կենսագործել բոլոր հակահրդեհային ձեռնարկումները և կատարել պետական հրդեհային հսկողության հետազոտման ակտերում նշված առաջարկները.

բ) վոչ պակաս քան յերկու ամիսը մեկ անգամ պարբերական հետազոտումներ կատարել տան բոլոր բնակարաններում, կազմելով նկատված թերությունների մասին հատուկ ակտեր.

գ) ժամանակին հայտնել քաղաքի հրդեհային տեսչությանը հայտնաբերված այն բոլոր թերությունների մասին, վորոնք սատակացնում են հրդեհի վտանգը կամ սպառնում են հրդեհ առաջ բերել, ինչպես և առանձին քաղաքացիների կողմից հակահրդեհային ձեռնարկումները խախտելու և չկատարելու բոլոր դեպքերի մասին, զանցառուներին պատասխանատվության յենթարկելու համար.

դ) կազմակերպել բնակվարձկոոպի անդամների ընդհանուր ժողովներում շրջ. հրդեհային տեսչության զեկուցումներ հակահրդեհային գործի մասին։

5. Յուրաքանչյուր բնակվարձկոոպում պետք է լինի հասարակական հրդեհային տեսուչ, ընտրված բնակվարձկոոպի անդամների ընդհանուր ժողովում, իսկ 200-ից ավելի անդամ ունեցող բնակվարձկոոպներում, բացի այդ, կազմակերպվում է հրդեհային պահպանությանն աջակցող բջիջ, վոչ պակաս քան 3 հոգուց բաղկացած, ընդվորում, այդ դեպքում, հասարակական հրդեհային տեսուչն աջակցող բջիջի ղեկավարն է հանդիսանում։ Հասարակական հրդեհային տեսուչները և աջակցող բջիջները ղեկավարում են քաղաքի հրդեհային վարչության մշակած հատուկ հրահանգով, ինչպես և կապակցում իրենց աշխատանքը յենթաշրջանակմիությունների հրահանգիչների հետ։

6. Հրդեհային ապահովության ասպարեզում լավագույն հասարակական աշխատանք կատարելու համար բնակվարձկոոպներում հետևյալ խրախուսանքներն են սահմանվում՝

ա) պարգևատրում դրամով և արժեքավոր ընծաներով.

բ) պարգևատրում քաղաքի հրդեհային պահպանության վարչության պատվագրով.

գ) միջնորդում Կոմանդանտուրայի կրծքի նշանով պարգևատրելու մասին։

7. Այս կանոնները խախտողները յենթարկվում են վարչական տույժի։

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ.

8. Հրդեհներ առաջ գալու բոլոր դեպքերում անկախ դրանց չափից, պետք է անմիջապես հայտնել այդ մասին մոտակա հրշեջ խմբին։

9. Բնակվարձկոոպում յեղած բոլոր հեռախոսային ապարատների մոտ պետք է փակցված լինի տախտակ, վորը ցույց է տալիս հրշեջ խմբի և քաղաքի հրդեհային պահպանության վարչության հեռախոսների համարները։

10. Տնային վարչությունը պարտավոր է հետևել, վորպեսզի քաղաքային ջրմուղի հրդեհային հիդրանտների (ծորակ) կափարիչները մաքրված լինեն ձյունից և սառույցից իրենց շենքին հարակից փողոցներում, թողնելով կափարիչի մոտ փուխրացրած ձյունի շերտ 10–13 սանտիմետր բարձրությամբ։

11. Տարածությունները շենքերի միջև, կամարային անցքերը և բակերի անցքերը պետք է ազատ լինեն վորևե իրերից նմանապես արգելվում է առանց հրդեհային պահպանության թույլտվության բակերը պահեստային ձեռնարկությունների համար ոգտագործելու։ Բակերում կարելի յե միայն ունենալ բնակվարձկոոպի վերանորոգման համար ծառայելիք չինանյութեր այն

պայմանով, վոր նյութերը գտնվեն վոչ պակաս քան չորս մետր հեռավորության վրա քարի շենքերից և 8 մետր՝ փայտի և խառը շենքերից:

Ծանոթություն. Բրանդմայերային կամ հրադիմացկուն վակ պատերի նկատմամբ, նշված հեռավորությունը կարելի յե չպահպանել:

12. Ծղոտն ու խոտը պետք է պահել այդ նպատակի համար հատկացված շենքերում, իսկ բաց տեղերում՝ 15 մետրից ավելի մոտ հեռավորության վրա փայտե շենքերից և 10 մետր՝ մնացած շենքերից պահելը չի թույլատրվում: Խոտի, ծղոտի և այլ դյուրավառ նյութերի դեզերը չպետք է 25 մետրից ավելի յերկար, 12 մետրից ավելի լայն և 6 մետրից ավելի բարձր լինեն: Դեզերի միջև պետք է տարածություն թողնել, վոչ պակաս քան 10 մետր:

13. Չի թույլատրվում հանգած կիր թողնեն այնպիսի շենքերում, վորոնք չեն պաշտպանված մթնոլորտային տեղումներից և յենթահողային ջրերից:

14. Արգելվում է մշտական հրդեհային սանդուխքների մուտքը փակելը, ընդվորում ձմեռվա պահին այդպիսին պետք է մաքրել ձյունից:

15. Բնակմարձկոցներում կատարվելիք բոլոր վերափոխումներն՝ այն է միջնորմներ, դռներ, սարայներ, նկուղներ, վառարաններ սարքելն ու վերակառուցելն, արհեստանոցներ, ակումբներ, մանկատներ և այլն բացելը պետք է նախորոք համաձայնեցված լինեն հրդեհային պահպանության հետ:

16. Պատերի և ծածքերի մեջ, խողովակների անցնելու տեղում յեղած բոլոր ծակերը պետք է խնամքով ծածկել համապատասխան նյութով:

17. Ցնային վարչությունները պետք է հսկեն, վորպեսզի բնակմարձկոցի տերիտորիայի վրա գտնվող պահեստներում, ներքնահարկներում և այլ շենքերում առանց հրդեհային պահպանության թույլտվության չպահվեն հրդեհի տեսակետից վտանգավոր նյութեր, այն է՝ կերոսին, բենզին, սկիպիդար, յուղեր, լակեր և այլն:

3. ՀՐԴԵՀԸ ՀԱՆԳՑՆԵԼՈՒ ԱՌԱՋԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

18. Հրդեհ առաջ գալու դեպքում, պետք է իմաց տալ հրշեջ խմբին և ապա անմիջապես սկսել հանգցնել յեղած տնային միջոցներով, հայտնելով այն բնակիչներին, վորոնց վտանգ է սպառնում՝ միաժամանակ պետք է խուսափ տալ խուճապից և իրարանցումից, նմանապես չպետք է ջարդել պատուհանի դռների ապակիները, վորպեսզի մուտք գործած ոդից հրդեհը չսաստկանա:

19. Ծխանցքում մուրն այրվելիս արգելվում է նրա մեջ ջուր լցնելը (կարող են ճեղքված քներ առաջանալ), ինչպես և վերին բերանը մի վորևե կերպ փակելը: Նրման դեպքերում պետք է թողնել, վոր մուրն այրվի, ուշի ուշով հետևելով ծխանցքին նրա ամբողջ յերկարությամբ, մանավանդ վերնահարկում և այն տեղերում, վորտեղ ծխանցքը շփվում է շենքի փայտե մասերի (հատակի, առաստաղի, պատերի և այլն) հետ:

20. Այրվող կերոսինի, բենզինի, սկիպիդարի, յուղի վրա և այլն ջուր չի կարելի ածել: Դյուրավառ հեղուկներ հանգցնելու համար պետք է գործածել, ավազ, հող, հրամարիչներ կամ հատ ծածկոցներ՝ թրջած վերմակներ, գորգեր և այլն:

21. Ելեքտրահաղորդումն այրվելիս պետք է նախ անջատել տոկը, քանի վոր ելեքտրոլարերը տոկի տակ չի կարելի հանգցնել ջրով, թաց խոզանակներով, հեղուկ հրամարիչներով և այլ ելեկտրահաղորդ նյութերով:

4. ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ.

22. Չի թույլատրվում ինչպես գիսավոր, նույնպես և հետին, մուտքի դռները մեխելը կամ փակելը: Ցելքի բոլոր դռները պետք է հեշտությամբ բացվեն:

23. Արգելվում է մորևե բանով միջանցքները փակելը. դրանց անցնելու ազատ տեղի լայնությունը պետք է լինի վոչ պակաս քան մեկ մետր:

24. Սանդուխքների վանդակներում և սանդուխքների տակ չի կարելի պահել զանազան տեսակի նյու-

թեր, տնային իրեր, ինչպես և մեջնորմներ, նկուղներ և այլն սարքելը:

25· Խստիվ արգելվում է բնակարաններում ինքնավառ և պայթուցիկ նյութեր պահելն, ինչպես և դյուրավառ հեղուկներ պահելն ավելի քանակությամբ, քան այն անհրաժեշտ է տնային կարիքների համար, այն է՝ կերասին ութ լիտրից ավելի, բենզին յերկու լիտրից ավելի յուրաքանչյուր ընտանիքին:

26· Խստիվ արգելվում է դյուրավառ հեղուկն ապակե ամանում կամ բաց տեղ պահելն, ինչպես և միջանցքներում, սանդուխքների վանդակներում, վառած վառարանների, պրիմուսների և կերասինկաների կողքին պահելը:

27· Խստիվ արգելվում է պրիմուսներից և կերասինկաներից ոգտվելը միջանցքներում, սանուխքների վանդակներում և այլ տեղերում, ինչպես և վոչ սարքին պրիմուսներից և կերասինկաներից ոգտվելը:

Ծանոթություն·— Խոհանոց չլինելու դեպքում տնային վարչությունը պետք է հատկացնի համապատասխան շենք:

28· Խստիվ արգելվում է վառած կամ խիստ տաքացած լամպերի, պրիմուսների և կերասինկաների մեջ կերասին լցնելը:

29· Արգելվում է պրիմուսները և կերասինկաները վոչ ըստ իրենց նպատակին ոգտագործելն, այսինքն, վոչ թե կերակուր պատրաստելու և տաքացնելու, այլ ջեռացման, 10 լիտրից ավելի տարողություն ունեցող խոշոր բակերի մեջ չորեր յեռացնելու համար և այլն:

30· Չի թույլատրվում վառած վառարանները, լամպերը, պրիմուսները, կերասինկաները և այլն առանց հսկողության թողնելը կամ այդ հսկողությունը յերեխաներին հանձնարարելը:

31· Խոհանոցներում պրիմուսներից և կերասինկաներից ոգտվելիս, պետք է դրանք այնպես դասավորել, վորպեսզի բռնկվելու կամ պայթելու դեպքում յելքը խոհանոցից և սենյակներից ապահովված լինի:

5· ՋԵՌՈՒՑՈՒՄ·

32· Բոլոր գործող ծխանցքները պետք է մաքրել մըրից հետևյալ ժամկետներում, ամբողջ տարվա ընթացքում՝

ա) Սամովարները, խոհանոցի պլիտաները և յեռարանն յերկու ամիսը մեկ անգամ.

բ) լվացքատների, ճաշարանների, հացափուռերի հատուկ վառարաններն՝ ամիսը մեկ անգամ.

Ջեռուցման սեզոնի ընթացքում՝

ա) հոլանդական, ուսերմարկովյան և այլ վառարանները՝ վոչ պակաս քան ամիսը մեկ անգամ:

բ) կալորիֆիրները և այլ կենտրոնական ջեռուցումներն ամսական մեկ անգամ:

33· Ծխանցքների այրումը մրից պետք է կատարել՝ սովորական վառարաններինը՝ տարեկան մեկ անգամ, իսկ հատուկ վառարաններինը՝ տարեկան յերկու անգամ (յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ):

34· Ծխանցքները մրից մաքրում և այրում է միմիայն հրդեհային պահպանությունը, վորի համար տնային վարչությունները պետք է հատուկ պայմանագիր կնքեն: Մասնավոր անձանց այդ աշխատանքը կատարել չի թույլատրվում:

35· Յուրաքանչյուր բնակվարձկոոպ պետք է ունենա հատուկ տեսրակ, վորի մեջ գրվում է ծխանցքները մաքրելու և այրելու ժամանակն, ինչպես և վառարանների և ծխանցքների ստուգման արդյունքները:

36· Տնային վարչությունները հասարակական հրդեհային տեսչությունների հետ միասին պետք է վոչ ուշ քան յերկու ամիսը մեկ անգամ ստուգեն իրենց բրնակվարձկոոպի գործող վառարանների դրությունն և ստուգման արդյունքները գրանցեն հատուկ տետրակում:

37· Խստիվ արգելվում է ծխնելուղները բացի ծխանցքներից ոգտագործության և այլ նպատակի ծառայող անցքերով դուրս բերելը:

38· Չի թույլատրվում չորեր, վառելափայտ և այլ

դյուրավառ առարկաներ չորացնելը վառարանների վրա կամ նրանց դռների մոտ։

39. Տնային տիպի աղյուսե վառարանները և ծխանցքները պետք է բաժանված լինեն շենքի փայտե մասերից վոչ պակաս, քան 25 սանտիմետր տարածությամբ և այնտեղ վորտեղ դրանք չփվում են փայտի հետ, ծածկված լինեն կավի մեջ թրջած թաղիքով, իսկ վառարաններն ու ծխանցքները, ստանդարտ տներում, պետք է բաժանված լինեն շենքի փայտե մասերից վոչ պակաս քան 40 սանտիմետր տարածությամբ։

40. Արտադրական նպատակների համար ծառայող վառարաններն ու ծխանցքները (հացի փուռ, լվացքատներ, ճաշարաններ և այլն) պետք է բաժանված լինեն շենքի փայտե մասերից վոչ պակաս քան 50 սանտիմետր տարածությամբ։

41. Չի թույլատրվում տնային տիպի վառարաններն առանց ձեվափոխման արտադրական նպատակների համար գործադրելը։

42. Խստիվ արգելվում է վառարանները կերոսինով, բենզինով և այլ դյուրավառ հեղուկներով վառելը։

43. Վերնահարկի ծխնելույզները պետք է սվիտակացնել։

44. Ցուրաքանչյուր ծխանոք իր հիմքում պետք է դռնակ ունենա՝ մաքրելու համար, վերնահարկերում նման դռնակներ սարքելը չի թույլատրվում։

45. Բոլոր աղյուսե վառարանները պետք է ունենան՝

ա) ծխանցքի պատեր վոչ պակաս քան կես աղյուս հաստությամբ։

բ) փակվող յերկաթե դռնակներ.

գ) դռնակների առաջ այրվող հատակների վրա փակցված յերկաթաթերթերը, վոչ պակաս, քան 50 սանտիմետր յերկարությամբ և 30 սանտիմետր լայնությամբ՝ դռնակի յերկու կողմերը.

46. Յերկաթե և այլ ժամանակավոր վառարանները պետք է դնվեն՝

ա) շենքի չսվաղած մասերից՝ վոչ պակաս, քան մեկ մետր հեռավորության վրա.

բ) փայտե սվաղած կամ կավի մեջ թրջած թաղիքի վրայով յերկաթապատ մասերից՝ վոչ պակաս, քան 70 սանտիմետր հեռավորության վրա.

գ) այրվող հատակներից՝ վոչ պակաս, քան 25 սանտիմետր հեռավորության վրա, ընդվորում վառարանի տակ պետք է փակցված լինի յերկաթաթերթ, վորը պետք է ունենա վառարանի շուրջը, 30 սանտիմետր, իսկ դռնակի առաջ՝ 50 սանտիմետր լայնություն։

47. Յերկաթե ծխնելույզները պետք է դուրս բերված լինեն հիմնական ծխանցքների միջով և շենքի այրվող սվաղած և չսվաղած մասերից դտնվեն նույն տարածության վրա, ինչ վոր յերկաթե վառարանները։

48. Յերկաթե ծխնելույզները պետք է դնել ծխանցնելու համեմատ և այնտեղ, վորտեղ ծխնելույզներն են իրար միանում, սվաղել կավով։

49. Յերկաթե ծխնելույզները շենքի փայտե մասերով անցկացնելիս, ծխնելույզը պետք է բաժանել վոչ պակաս քան կես աղյուս լայնությամբ։

6. ՋԵՌՈՒՑԱՐԱՆ

50 Կենտրոնական ջեռուցման մեքենաների խնամքն ու նրանց աշխատանքի հսկողությունը պետք է հանձնարարել այնպիսի անձանց, վորոնք համապատասխան վորակ ունեն։

51. Կաթսաների շենքում չի թույլատրվում որվա պահանջից ավելի քանակությամբ հեղուկ և կարծր վառելիք պահելը։ Վառելիքի պաշարը պետք է պահել մեկուսացված հատուկ շենքերում, հրաղիմացկուն պատերով և ծածկերով։

52. Խստիվ արգելվում է վառարանների վառած ժամանակ ջեռուցարանն առանց հսկողության թողնելը

53. Ջեռուցարանում չի թույլատրվում տպրելն, ինչպես նաև կողմնակի առարկաներ պահելը։

54. Յեղած հրդեհային ծորակները պետք է առնել արկղների մեջ, վորտեղ պահվում են և հրդեհային ճբկուն խողովակները և բները։

Հեղուկ վառելիք լինելու դեպքում ջեռուցարանում պետք է ունենալ չոր ավազի պաշար:

55. Ջեռուցարանում այրվող ծածքերը պետք է հեղուկ կավի մեջ թրջած թաղիքի կամ ազբեստի վրայով յերկաթապատել:

56. Աշխատանքի ժամանակ բոլոր դները ջեռուցարանում պետք է բաց թողնել:

57. Ջեռուցարանում բավարար չափով պետք է լուսավորված լինի կաթսաների այն կողմը, վորտեղ չափողական գործիքներն են գտնվում :

58. Կենտրոնական ջեռացման բոլոր կաթսաները պետք է միանգամայն սարքին չափողական գործիքներ ունենան, այն է՝ մոնոմետրներ, ջրաչափիչ ապակիներ, նախապահական կափարիչներ և այլն:

59. Արգելվում է նախապահական կափարիչներին ինքնուրույնաբար լրացուցիչ ծանրոցներ կախելը:

60. Յերկար ընդհատումից հետո վառարաններ վառելուց առաջ անհրաժեշտ է նախապես աստիճանաբար տաքացնել ծխանցքը քիչ քանակությամբ վառելիքով:

7. ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

61. Խստիվ արգելվում է ապակե ռեզերվուարներ ունեցող կերասինի լամպերից ոգովելը:

62. Ելեկտրալուսավորության վերասարքավորել կամ նոր լուսավորություն անցկացնել կարող են միմիայն վորակյալ մանտյորները, տնային վարչության թույլտվությամբ:

63. Ելեքտրոլարը պետք է կախված լինի ֆարֆորե անվակների և վոչ մի դեպքում մեխերի վրա. նմանապես չի թույլատրվում, վոր ելեքտրալարերը վորևե տեղ շփվեն պատերի, առաստաղի, ծխնելույզների հետ և այլն:

64. Չի թույլատրվում ելեքտրալարը պատատակով ծածկելը:

65. Արգելվում է ելեքտրական լամպերի վրա թղթե շապիկներ հագցնելը կամ թղթով կամ ել չորով փաթաթելը:

66. Բոլոր պահպանակները պետք է միանգամայն սարքին լինեն և համապատասխանեն հաշիվներին:

67. Արգելվում է ժամանակավոր ելեքտրահաղորդում սարքելը:

68. Խոնավ շենքերում, այն է՝ վաննայի սենյակներում, սարայներում, լվացքատներում, վերնահարկերում և այլն չի թույլատրվում քուղի ելեքտրահաղորդում ունենալը:

69. Արգելվում է ելեքտրալարերի և արմատուրայի վրա վորևե իրեր կախելը:

70. Լուսավորության ցանցին ռադիո պարագաներ կարելի յե միացնել միմիայն մշտական լարեր անցկացնելու միջոցով՝ չտեսնելով:

71. Սանդուխքների վանդակները և միջանցքները գիշերվա պահին պետք է լուսավորված լինեն:

8. ՎԵՐՆԱՀԱՐԿԵՐԸ

72. Արգելվում է վերնահարկերում զանազան տեսակի դյուրավառ նյութեր և տնային իրեր պահելն, ինչպես և փայտի միջնորմներ, մառաններ, աղամնաններ և այլն սարքելը: Վերնահարկերը պետք է միշտ մաքուր լինեն և միանգամայն ազատ:

73. Չի թույլատրվում վերնահարկերը կավի կամ կրի հետ չխառնած փայտե սղոցուքով և այլ դյուրավառ նյութերով ծածկելը (ծածկերը փափկացնելը):

74. Վերնահարկերի բոլոր պատուհանները պետք է լինեն ապակած, կամ ունենան հատուկ փեղկեր ու միշտ փակված պահվեն:

75. Դեպի վերնահարկ տանող դռները պետք է միշտ փակ լինեն և բանալին պետք է պահվի վորոշ տեղում:

76. Շորեր չորացնելը հրադիմացկուն ծածկեր ունեցող վերնահարկերում թույլատրվում է այն պայմանով, վոր պարանները չամրացվեն ծխնելույզներին:

77. Չի թույլատրվում վերնահարկում կրակը ձեռքին շրջելը և ծխելը, վորի մասին պետք է փակցված լինի հայտարարություն:

78· Արգելվում է ծխանցքներին ռադիոանտենաներ ամրացնելը։

9· ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՈԳՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԵՐ·

79· Բնակվարձկոոպի հասարակական ոգտագործության վայրերն, այն է՝ ակումբները, մանկասները, կարմիր անկյունները և այլն պետք է բավարարեն հետևյալ պահանջներին՝

ա) յուրաքանչյուր յերկու սանդուխքին ունենան վոչ պակաս քան յերկու յելք 1,40 մետրից վոչ պակաս լայնությամբ։

Ծանոթություն·— Ելքերն ու սանդուխքները կարող են լինել ընդհանուր՝ մյուս շենքերի հետ։

բ) տաքացվեն մշտական վառարաններով կամ կենտրոնական ջեռուցմամբ·

գ) ունենան հատուկ տեղեր ծխելու համար, վորտեղ պետք է դնել մոխրամաններ ջրով՝ զլանակների մնացորդների համար։

դ) նայած շենքի մեծությանն, այդպիսին պետք է ապահովված լինի հրդեհային ինվենտարով, հրդեհային պահպանության ցուցումով։

80· Ակումբի շենքում, (ապարատային սենյակ չունեցող) հասարակության մեջ շարժական կինոյից ոգտվելու համար նախորոք պետք է ստանալ հրդեհային պահպանության թույլատվություն։

81· Զի թույլատրվում հասարակական ոգտագործության շենքում յերկաթե վանդակներով պատուհաններ ունենալը կամ փեղկերը փակելը։

82· Բոլոր դռները պետք է հեշտությամբ բացվեն յելքի ուղղությամբ։

83· Ակումբներում բոլոր յելքի դռների վրա պետք է ունենալ լուսավորված մակագրեր «յելք», «պահեստի յելք», ինչպես նաև որապահ լուսավորություն, վորը միացվում է հատուկ ձևով։

10· ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

84· Բնակվարձկոոպի տերրիտորիայում, վերանորոգման կամ շինարարական աշխատանքներ կատարելիս, բոլոր շինարարական մնացորդները (տաշեղները, ռանդվածքը և այլն) ժամանակին և վոչ պակաս քան որական մեկ անգամ, յերեկոյան աշխատանքից հետո, պետք է հավաքել։

85· Խստիվ արգելվում է հատակի վրա քաշ տալքելը, նախապես չհավաքելով նրա տակ յեղած տաշեղները, ռանդվածքը և այլն։

86· Խստիվ արգելվում է ծխելը վերանորոգվող շենքում, վորտեղ կան տաշեղներ, ռանդվածք և այլն· այդ մասին պետք է հատուկ հայտարարություն փակցված լինի։ Նման դեպքերում ծխելու համար պետք է հատուկ տեղեր հատկացնել։

87· Խոշոր վերանորոգում կատարելիս, պետք է ունենալ հրամարիչ միջոցներ, հրդեհային պահպանության ցուցումով։

88· Ջրմուղի, ջեռուցման և այլ խողովակներ տաքացնելիս, անհրաժեշտ է նախազգուշական միջոցներ ձեռք առնել, մանավանդ վերնահարկերում, ծխնելույզների՝ այրվող ծածկերի միջով անցնելու տեղերում, արգելվում է այս յերկու դեպքերում ծխնելույզները դյուրավառ նյութերով փաթաթելու և այրելու յեղանակից ոգտվելն, ինչպես և զոդա լամպերով տաքացնելը։

89· Խոշոր վերանորոգում կատարելիս պետք է ունենալ որապահ լուսավորություն դիշերվա պահին։

90· Յեթե վերանորոգումը պահանջում է հանել էլեքտրավորումն, ապա անհրաժեշտ է նախապես զատել էլեքտրոեներգիան։

91· Խստիվ արգելվում է ծածկի դերանները փոխելիս շարել այդպիսիներն առանց գոյություն ունեցող կանոններով սահմանված տարածությունն այդ դերանների և ջեռուցման գործի,

92· Արգելվում է բոլո[illegible] շենք-

ՀՀ Ազգային գրադարան
NL0936484

14-080

բի ծուռքը վոչ աշխատանքի ժամերին, բացառությամբ վերանորոգում կատարող վարչության։

11. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՆՈՆՆԵՐ

93. Բնակվարձկոոպների վարչությունների նախագահները պարտավոր են մանրամասն ծանոթացնել այս կանոնադրությանը և կանոններին բնակվարձկոոպնեբի բոլոր բնակիչներին, մշակել բնակվարձկոոպների անդամների ընդհանուր ժողովում, այլ և բացատրել և փակցնել առանձին համապատասխան շենքերում ջեռուցարանում, ակումբում, վերնահարկում և այլ տեղերում՝ ի գիտություն և կյանքում կիրառելու համար։

94. Այս կանոնների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկանքներ, պարզաբանումներ և խորհուրդներ ստանալու համար պետք է դիմել հրդեհային պահպանության վարչությանը։

ՀՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՀ — ՍՍՌ

Գրադարան
Սեփականություն
ՀԱՍՀ — ՍՍՌ
անվ. Ա. Մասնիկյանի
Ս. ԳՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ